

"ՓՄՁ ներդրումներ" ՈՒՎԿ ՓԲԸ 2011 թ-ի 4-րդ եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները վավերացվել է կազմակերպության կողմից 13.01.2012թ-ին, որը տեղակայված է կազմակերպության ինտերնետային տնային կայքում:

"ՓՄՁ ներդրումներ" ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի վրա տարածվում են միայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կանոնադրական կապիտալի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերի հիմնական տնտեսական նորմատիվները, քանի որ կազմակերպությունը հրապարակային օֆերտաների միջոցով փոխառություններ չի ներգրավում: Վարկային կազմակերպությունը իր գործունեության շրջանակներում ֆինանսավորում է անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև իրավաբանական անձանց որտեղ պետական մասնակցությունը չի գերազանցում 50%-ը: Վարկային կազմակերպության կողմից ֆինանսավորումն իրականացնում է երկու տարբեր գործիքների՝ ուղղակի վարկավորման և կապիտալի ֆինանսավորման եղանակներով: Կազմակերպության առաքելությունը ՀՀ-ում փոքր և միջին բիզնեսի զարգացման խթանումն է, որը կնպաստի արտահանման ծավալների աճին, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը: Ֆինանսավորումն իրականացվում է բացառապես ՀՀ դրամով, առավելագույնը մինչև 5 տարի մարման ժամկետով, տարեկան 10-18% տոկոսադրույքով՝ կախված տվյալ բիզնեսի առանձնահատկություններից:

"ՓՄՁ ներդրումներ" ՈՒՎԿ ՓԲԸ-ն աշխատակիցները թվով 16 (տասնվեց) են: Կազմակերպության գրանցման և գործունեության վայրը նույնն է՝ ք.Երևան Արմեն Արմենակյան 2/5, հեռ. (+37410) 65-56-65, 65-56-60 ֆաքս (+37410) 65-56-59: էլ.փոստի հասցեն info@smeinvest.am ինտերնետային տնային կայք smeinvest.am: